ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Հարգելի պարոն Քալաշյան,

2021 թվականի մարտի 16-ից սկսած Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացնում է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթներ (այսուհետ՝ քծ մրցույթ), առ 2022 թվականի հոկտեմբերի 12-ի դրությամբ անցկացրել ենք շուրջ 132 քծ մրցույթ, որոնց մասնակցել են շուրջ 1100 մարդ:

Հանձնաժողովի կազմակերպած 132 քծ մրցույթից քաղաքացիներ Սեմյոն Բաբայանը և Հայկ Ղազարյանը մասնակցել են համապատասխանաբար՝ 45 քծ մրցույթի (45-ական քծ թեստավորման և հարցազրույցի փուլեր) և 91 քծ մրցույթի (91-ական քծ թեստավորման և հարցազրույցի փուլեր), վերջիններս թեև հաղթահարել են թեստավորման փուլի անցողիկ շեմերը, այնուամենայնիվ Հանձնաժողովը քծ մրցույթի հարցազրույցի փուլում վերջիններիս փորձը, հմտությունները ոչ համապատասխան է գնահատել Հանձնաժողովի կարիքներին: Մրցույթի արդյունքներից դժգոհ՝ վերջիններս ստեղծում են լարված մթնոլորտ, զրպարտում Հանձնաժողովի անդամներին և աշխատակիցներին, աղաղակում, մրցութային հանձնաժողովի անդամների նկատմամբ բացահայտ արհամարական և անբարեվարք վարքագծով խաթարում են վերջիններիս աշխատանքը, վախի և խուճապի մթնոլորտ ձևավորում քծ մրցույթի այլ մասնակիցների շրջանում և նման վարքագիծը կանխելու նպատակով պարբերաբար ստիպված ենք եղել հրավիրել անվտանգության աշխատակիցներին:

Նշված իրավիճակները կառավարելու և հարթելու համար Հանձնաժողովը գործադրել է լրացուցիչ ռեսուրս՝ ժամանակ, նախաքննական մարմնին բացատրություններ և պարզաբանումներ ներկայացնելու համար:

Միաժամանակ Հանձնաժողովը դիմել է նաև ՔԾ գրասենյակ, տրամադրել համապատասխան նյութեր, ապացուցողական բնույթի տեսանյութեր:

Արդյունավետ վարչարարություն իրականացնելու տեսանկյունից Հանձնաժողովն առաջարկում է սահմանափակել քաղաքացիներ՝ Սեմյոն Բաբայանին և Հայկ Ղազարյանին մրցույթի մասնակցելու հնարավորությունը և վերջիններիս դիմումներին այլևս ընթացք չտալ, քանի դեռ հանգամանքները, որոնք բացառում են վերջիններիս կոնկրետ ՔԾ պաշտոններում նշանակելը էականորեն չեն փոխվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ մարդկային ռեսուրսների կառավարման փորձագետ
Սարգիս Միրզոյան
հեռ.012 77 77 24